ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՅՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգի վերաբերյալ

Գործողություն 1.4. Ուսուցողական այց

Ուսուցողական այց Դանիայի վիճակագրություն

2016թ. հունիսի 28-ից հուլիսի 1

Հայաստանի
Հանրապետության ազգային
վիճակագրական
ծառայություն

STATISTICS
DENMARK

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ 2
2. Քաղած դասեր 3
3. Եզրակացություններ և առաջարկություններ 3
Հավելված 1. Ծրագիր 5
Հավելված 2. Հանդիպումների մասնակիցներ 7

Հապավումներ

ԵՄ	Եվրոպական միություն
ԱՎԻ	Ազգային վիճակագրական ինստիտուտ (օր. ՀՀ ԱՎԾ)
ԱՎՀ	Ազգային վիճակագրական համակարգ (պաշտոնական վիճակագրություն)
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

Ընդհանուր մեկնաբանություններ

Այս ուսուցողական այցն իրականացվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» Թվինինգ ծրագրի 1-ին բաղադրիչի 1.4 գործողության շրջանակներում:

Ուսուցողական այցի նպատակն էր ստանալ գիտելիքներ դանիական փորձի և տարածման ու որակի կառավարման գործնական կիրառման վերաբերյալ, ինչպես նաև նկարագրել, թե ինչպես կարող է այդ գիտելիքն օգտագործվել ՀՀ ԱՎԾ-ում:

ՀՀ ԱՎԾ աշխատակիցները ցանկանում են իրենց երախտիքն արտահայտել բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին իրենց աջակցության և Դանիայում ստացված արժեքավոր տեղեկատվության համար, ինչը մեծապես օգտակար է եղել աշխատանքի համար:

Սույն հաշվետվության մեջ արտահայտված տեսակետները և դիտարկումները պատկանում են ՀՀ ԱՎԾ ուսուցողական այցի մասնակիցներին և կարող են չարտահայտել ԵՄ, ՀՀ ԱՎԾ կամ Դանիայի վիճակագրության տեսակետները:

2. Քաղած դասեր

Ուսուցողական այցի ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.

- որակի ապահովման շրջանակ,
- որակի ապահովման գործիք,
- Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդել (GSBPM) և Ընդհանուր գործունեության մոդել վիճակագրական կազմակերպությունների համար (GAMSO),
- աշխատանք սպառողների հետ,
- տարածման ռազմավարություն և արտացոլում,
- կայք և վիճակագրական տվյալների բանկ (Ստատբանկ),
- արտադրության գործընթացը Ստատբանկում և սպառողների ուսուցում,
- անհատական կարիքներին հարմարեցված վիճակագրության կազմում, մարքեթինգ, բրենդինգ,
- վիճակագրական տվյալների և մետատվյալների փոխանակում (SDMX) և տվյալների փաստաթղթավորման նախաձեռնություն (DDI),
- Ընդհանուր վիճակագրական տեղեկատվության մոդել (GSIM) և Ընդհանուր վիճակագրության արտադրության ճարտարապետություն (CSPA),
- ժամանակի գրանցում:

Հայաստանի պատվիրակությունը հանդիպմանը ներկայացրեց Հայաստանի փորձը վիճակագրության տարածման և որակի կառավարման բնագավառներում:

Ուսուցողական այցի առաջին օրը Դանիայի վիճակագրության միջազգային գծով խորհրդատվության բաժնի ավագ խորհրդատու Շարլոտե Յուլ Հանսենը հանդես եկավ ողջույնի խոսքով և ներկայացրեց այցելության ծրագիրը:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Անահիտ Սաֆյանը մանրամասնորեն ներկայացրեց ՀՀ ԱՎԾ կողմից կատարված աշխատանքը և ընթացիկ իրավիճակը որակի կառավարման բնագավառում: Նա մասնավորապես նշեց, որ ՀՀ ԱՎԾ որակի համակարգը հիմնված է Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի 15 սկզբունքների վրա: ՀՀ ԱՎԾ որակի քաղաքականությունն ուղղված է համապատասխան մեթոդաբանությունների և գործիքների մշակման միջոցով վիճակագրական արտադրանքի և գործընթացների համակարգված բարելավմանը՝ շեշտը դնելով բարձր որակի ծառայությունների մատուցման, աշխատանքի և ծախսերի արդյունավետության բարձրացման վրա:

Նա տեղեկացրեց, որ «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» առաջին ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակում ՀՀ ԱՎԾ-ում 2011թ. ստեղծվել է որակի կառավարման աշխատանքային խումբ, որը մշակել է վիճակագրական արտադրանքների ցանկ՝ թվով 136: 2011-2012թթ. ընթացքում ՀՀ ԱՎԾ յուրաքանչյուր վիճակագրական արտադրանքի համար մշակվել է որակի հռչակագիր, որոնք խմբավորվել են 17 բնագավառների ներքո, ներկա պահին առկա է թվով 138 վիճակագրական արտադրանք:

Որակի հռչակագիրը նկարագրում է վիճակագրության օրենսդրական հիմքերը, վիճակագրության նպատակը և մեթոդաբանությունը, դրա տարածումը և վիճակագրության սպառողների և նրանց մոտ առաջացող հարցերի փարատման համար այլ կարևոր տեղեկատվություն:

ՀՀ ԱՎԾ կայքում /www.armstat.am/ բացվել է «Փաստաթղթավորում» բաժինը /http://www.armstat.am/am/?nid=498/, որտեղ զետեղվել են «Աջակցություն Հայաստանի վիճակագրությանը» ԵՄԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Որակի կառավարում» բաղադրիչի շրջանակում մշակված որակի հռչակագրերը՝ հայերեն և անգլերեն:

«Աջակցություն Հայաստանի վիճակագրությանը» Թվինինգ ծրագրի միջոցով» ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակում 2012թ. ներդրվել է PC Axis/PX Web տարածման գործիքը և մշակվել է ARMSTATBANK.AM տվյալների բազան: ARMSTATBANK.AM-ը տրամադրում է արագ և մատչելի հասանելիություն վիճակագրական տեղեկատվությանը և հնարավորություն է ընձեռում վիճակագրական տեղեկատվության սպառողներին ներբեռնել տվյալները MS Excel, xml կամ այլ ձևաչափերով, ինչպես նաև ստեղծել գծապատկերներ և աղյուսակներ: ARMSTATBANK.AM–ը կապված է Որակի հռչակագրերի հետ:

2014թ. որակի կառավարման աշխատանքային խումբը սկսել է նոր գործունեություն որակի կառավարման բնագավառում: Աշխատանքային խումբը ստանձնել նոր պարտավորություններ, սակայն պահպանելով նախկին առաջադրանքը՝ առկա որակի հռչակագրերի արդիականացումը և անհրաժեշտության դեպքում նոր հռչակագրերով համալրումը, ինչպես նաև բաժիններին աջակցության տրամադրումը:

2014թ. սեպտեմբերին աշխատանքային խումբը սկսել է Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի (GSBPM) ներդրումը: Ներկա պահին 129 վիճակագրական արտադրանք նկարագրված են Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համապատասխան, որոնցից 112 խմբավորված են 29 խմբերում:

Աշխատանքները շարունակվում են բոլոր 138 վիճակագրական արտադրանքների ըստ Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի նկարագրության ուղղությամբ:

2016 թ. փետրվարին ՀՀ ԱՎԾ-ում ստեղծվել է որակի կառավարման բաժին: Մշակվել է Որակի քաղաքականության փաստաթուղթ, որը զետեղվել է ՀՀ ԱՎԾ կայքում /http://www.armstat.am/file/doc/99498028.pdf/:

Հաջորդ ելույթը Դանիայի վիճակագրության մեթոդաբանության և վերլուծության գծով գլխավոր խորհրդական Կարին Բլիքսինն էր: Նա ներկայացրեց «Դանիայի վիճակագրության ռազմավարություն 2020թ.» փաստաթուղթը, որում հստակորեն ամրագրված են առաջիկա 5 տարիների գործունեության հիմնական ուղղությունները:

Կարին Բլիքսի առաջին ելույթը վերաբերում էր որակի ապահովման շրջանակին: Նա նշեց, որ որակը լինում է լավ կամ վատ: Վիճակագրության հանդեպ վստահությունը հիմնված է ՄԱԿ-ի Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների, Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի և Եվրոպական վիճակագրական համակարգի որակի հռչակագրի վրա:

Դանիայի վիճակագրությունում մեծ ուշադրություն է հատկացվում որակի կառավարմանը: Մասնագետները համակարգված պարզում են թողարկվող արտադրանքի թույլ և ուժեղ կողմերը, որպեսզի շարունակականորեն բարելավեն ինքնին գործընթացը և արտադրանքի որակը: Պարբերաբար իրականացվում է նաև որակի աուդիտ, որը խթանում է գործընթացի առավել բարելավումը:

Նրա հաջորդ ելույթը վերաբերում էր որակի ապահովման գործիքին: Նա նշեց, որ ներկայումս Դանիայի վիճակագրությունում որակի վերահսկման ստորաբաժանում է գործում, որի առաջին խումբը զբաղվում է որակի, երկրորդ խումբը՝ մեթատվյալների, իսկ երրորդը՝ մեթոդաբանության ուսումնասիրմամբ: Գործում է ինքնագնահատման համակարգը:

Նրա վերջին ելույթը վերաբերում էր Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելին (GSBPM) և Ընդհանուր գործունեության մոդելի վիճակագրական կազմակերպությունների համար (GAMSO): GSBPM-ը մշակվել է դեռևս 2009թ., որի միջոցով մշտապես բարելավվում է վիճակագրության որակը և վիճակագրական արտադրանքի գործընթացը դառնում է առավել արդյունավետ: Արդիականացված վիճակագրության և վիճակագրական արտադրանքի հիմնական ճարտարապետության չորս հիմնաքարերից մեկը GAMSO-ն է: Այն պարունակում է երեք հիերարխիկ մակարդակներ, որոնից առաջինը ռազմավարություն և առաջնորդումն է, երկրորդը՝ հնարավորությունների կառավարումն ու համախմբված համագործակցությունը, իսկ երրորդը՝ արտադրությունը:

Ուսուցողական այցի երկրորդ օրը իրենց ելույթներով հանդես եկան Դանիայի վիճակագրության հաղորդակցության և վաճառքի գծով ղեկավար Քարստեն Սանգենբերգը և հաղորդակցության բաժնի ղեկավար Էնեգրետե Վուլֆը: Նրանք

համատեղ ելույթով ներկայացրեցին, որ Դանիայի վիճակագրության ռազմավարությունը միտված է հանրության թիրախային սպառողների և ռեսպոնդենտների հիմնական կարիքների ուսումնասիրությանը և լավագույն հնարավոր եղանակով դրանց բավարարմանը: Սպառողների հետ համագործակցությունը և նրանց ներգրավվածությունն ունի երեք մակարդակ՝ լսել նրանց, համագործակցել և համատեղ կերտել արդիական վիճակագրություն (աշխատել սպառողների հետ, այլ ոչ նրանց համար): Գերնպատակներից մեկն է ստեղծել նոր ուղիներ նրանց կարիքների բավարարման համար՝ պահպանելով տվյալների անվտանգության մարտահրավերները (լինել զգուշավոր, բայց նաև բաց հանրության առջև): Դանիայի վիճակագրությունը հիմնական հովանոցը և հարթակն է մյուս վիճակագրություն արտադրողների համար, իսկ սպառողն էլ մշտապես վերադառնում, կարիքները բավարարում և որոնում է Դանիայի վիճակագրության կայքում: Հարկ է նշել, որ Դանիայում 16 նախարարություններից ստացվում է 163 վիճակագրական արտադրանք, իսկ Դանիայի վիճակագրությունը մշակում է 300-ը: Վիճակագիրները մշտապես հետևողական են, թե ինչ վիճակագրություն է տարածվում զանգվածային լրատվամիջոցներով, պարբերաբար քննարկվում են խնդրո առարկա հարցերը և Google Analytics-ով հաշվարկում սպառողների մուտքերն ու ելքերը կայքում: Վիճակագրությունը տարածելու նպատակով օգտագործվում են նաև սոցիալական կայքերը: Հետագայում աշխատանքներ են տարվելու առավել բարելավված որոնման համակարգ ներդնելու, առավել հստակություն ապահովելու և տվյալների երկարաժամկետ շարքեր ներդնելու ուղղությամբ:

Հաջորդ շնորհանդեսը ներկայացրեցին Սթին Դահլ Պեդերսենը և Լարս Քնուսենը, որոնք մանրամասնորեն ներկայացրեցին Դանիայի վիճակագրության տարածման ռազմավարությունը և վիզուալիզացումը, որն ամբողջությամբ միտված է սպառողների կարիքների հնարավորինս լիարժեք բավարարմանը:

Ուսուցողական այցի երրորդ օրը հաղորդակցության բաժնի ղեկավար Էնեգրետե Վուլֆը ներկայացրեց վիճակագրական տեղեկատվության տարածման վերաբերյալ իր տեսակետները: Նա մասնավորապես նշեց, որ վիճակագրական տեղեկատվության տարածումը պետք է համապատասխանի Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքներին: Վիճակագիրները պետք է ջանքեր գործադրեն սպառողների կարիքները բավարարելու ուղղությամբ: Հարկ է նշել, որ Դանիայի վիճակագրությունում տեղեկատվության տարածման ժամը սահմանված է առավոտյան 9.00-ն: Ծառայության գլխավոր տեղեկատվական բազան Ստատբանկն է, որում առկա է 3 500 աղյուսակ, 3 մլն. ցուցանիշ, գործում է նաև հեռախոսով (մոբիլ) տեղեկատվության տարածման առավել արագ և մատչելի տարբերակ: Տարեկան կայք է այցելում 2.5 մլն. օգտատեր, որից 800 000-ը՝ Ստատբանկ: Տարեկան գրանցվում է 215 000 հաճախակի տրվող հարցեր, որոնց տրվում է լիարժեք պատասխան:

Աշխատանքներ են տարվում Դանիայի վիճակագրության կայքի «Գլխավոր» էջի թարմացման և առավել արդիականացման ուղղությամբ: Վերջին շրջանում թարմացվել է «որոնման գործիքը», կարմիր գույնով ներկայացվում են նորությունները, հատուկ դաշտ է տրամադրվել հետաքրքրաշարժ տեղեկատվության համար, հաճախակի են

դարձել հակիրճ տեղեկատվության զետեղումները, ավելացել են նաև վերլուծական պարզաբանումները:

Հաղորդակցության գծով ավագ խորհրդական Յակոբ Սոլենդերը և հաճախորդների կենտրոնի բաժնի ղեկավար Լոունե Սլյութթը ներկայացրեցին Ստատբանկի արտադրման գործընթացը և սպառողների վերապատրաստման ընթացակարգը:

Ուսուցողական այցի չորրորդ օրը մեթատվյալների ղեկավար Մոունս Գրոսենի խնդրանքով ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Անահիտ Սաֆյանը մանրամասնորեն ներկայացրեց ՀՀ ԱՎԾ կողմից որակի կառավարման ողջ գործընթացը, որից հետո փորձագետը ներկայացրեց Դանիայի վիճակագրությունում որակի և մեթատվյալների պատմությունը: Նա տեղեկացրեց, որ 2010թ. Լարս Թիգենսենի հետ համատեղ աշխատել են ստանդարտների ներդրման ուղղությամբ, ստեղծել ընդհանրական մոդել: 2012թ. հունվարին նրանք ստեղծել են նոր համակարգ, որն ամբողջությամբ փաստաթղթավորել է վիճակագրական տեղեկատվությունը, մեթատվյալների ստանդարտները և նոր դասակարգիչների փոփոխությունները:

Վիճակագրական տեղեկատվությունը պետք է օժանդակի սպառողներին կողմնորոշվելու մշտապես փոփոխվող և անընդմեջ բարելավվող տեղեկատվական ծովում, նրանց տեղեկացվածության գործընթացում և ապահովի համապարփակ տեղեկատվություն Դանիայի վիճակագրական արտադրանքի վերաբերյալ: Վիճակագրությունն առաջնորդվում է հիմնական վիճակագրական արտադրանքի, գործընթացների և ճարտարապետության մոդելներով և ստանդարտներով /GSBPM, GAMSO և GSIM/: Ընդ որում, GSIM ստանդարտը շատ կարևոր գիտելիքներ է տալիս և հովանոց է հանդիսանում DDI-ի (փաստաթղթավորման) և SDMX-ի (վիճակագրական տվյալների և մեթատվյալների փոխանակման) համար: Շնորհիվ այդ գործող մոդելի, վիճակագրությունն անընդհատ բարելավվում է և բիզնես գործընթացները և սկզբունքները վերաձևավորվում են:

Իր շնորհանդեսի ավարտին նա ներկայացրեց նաև «Սպառողների կարիքների բավարարում ու վիճակագրական ստանդարտների միջոցով դրանց արդյունավետության բարելավում և Սկանդինավյան համագործակցություն» թեման, որում հեղինակը կարևորում է մեթատվյալների առավել արդյունավետ օգտագործումը. ա/սպառողների հետ հարաբերություններում մեթատվյալների հասկացված լինելու նշանակությունը, բ/վիճակագրություն արտադրելու գործընթացում մեթատվյալների մատչելիությունը և ամենակարևորը՝ գ/մեթատվյալների մասին խոսելիս դրանց եզրույթների բարելավումն ու ճշգրտությունը:

«Ժամանակի հաշվառում» թեմայով հանդես եկավ Դանիայի վիճակագրության ֆինանսական և սպասարկման բաժնի պետ Մարթին Բինգեն Յորգենսենը: Ժամանակի հաշվառումը գործում է 1990թ., իսկ ներկա «mTIME» համակարգը գործում է 2004թ.: Այդ համակարգում հստակ գործում է աշխատակիցների մուտքի-ելքի գրանցումը: Աշխատաժամանակը ճկուն է, իրականացվում է առօրյա աշխատանքի հաշվառում: Տարանջատվում են գործունեության հետևյալ խմբերը՝ վիճակագրություն, դրամաշնորհներ, ռեգիստրներ, հրապարակումներ, առևտրային խնդիրներ, այլ (օր. ճաշի ժամ), տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների հետ

համագործակցություն, կառավարում, բացակայություն: Արտադրանքը գնահատվում է 7-նիշ համակարգով, որի 1-ին նիշը ցույց է տալիս համապատասխան խմբի պատկանելիությունը, 2-4-նիշերը՝ վիճակագրության տեսակը, 5-7-ը՝ հերթական համարը:

Ուսուցողական այցի վերջում ամփոփիչ ելույթով հանդես եկավ Դանիայի վիճակագրության միջազգային գծով խորհրդատվության բաժնի ավագ խորհրդատու Շարլոտե Յուլ Հանսենը: Նա ավարտեց հանդիպումը, ներկայացնելով այցելության արդյունքները, ամփոփիչ եզրակացությունները, գնահատումները և իրականացվելիք հետագա քայլերը և միջոցառումները:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

Հայաստանի վիճակագիրների մասնակցությունը հանդիպմանը հնարավորություն ընձեռեց ծանոթանալու Դանիայի վիճակագրական ծառայության լավագույն փորձին վիճակագրության տարածման, հաղորդակցության և որակի կառավարման բնագավառներում և դրանց հետ կապված վերջին զարգացումներին, ինչպես նաև քննարկելու ներկայացված գործիքների և ստանդարտների ներդրման և իրականացման հարցերը, մարտահրավերները և գործողություններն ուղղված Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի հետագա կատարելագործմանը: Ուսուցողական այցի ընթացքում դանիացի փորձագետների բոլոր շնորհանդեսները շատ հետաքրքիր և բովանդակալից էին: Շատ ուսանելի էր Դանիայի վիճակագրության փորձը սպառողների հետ համագործակցության և որակի կառավարման բնագավառներում: Ուսուցողական այցը կառուցողական էր և շատ արդյունավետ:

Հանդիպման ընթացքում տեղի ունեցան նաև քննարկումներ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, մասնավորապես որակի կառավարման և Ընդհանուր վիճակագրական բիզնես - գործընթացի մոդելի ներդրման, կայքի դիզայնի կատարելագործման և սպառողների հետ աշխատանքի բարելավման վերաբերյալ:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել էին «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակում:

Դանիայի վիճակագրության նոր՝ 2020 ռազմավարությունը բոլոր քննարկումների հիմնաքարն էր: Ներկայացված նյութերը և քննարկումները շատ օգտակար էին հայ գործընկերների համար և շատ բարձր գնահատվեցին նրանց կողմից: «Մենք ձգտում ենք կատարելության, բայց բավարարվում գերազանցությամբ» կարգախոսով եզրափակվեց աշխատանքը Դանիայի վիճակագրությունում:

Պատվիրակության ղեկավար և ՀՀ ԱՎԾ նախագահ պրն Մնացականյանը շնորհակալություն հայտնեց դանիացի գործընկերներին բարձր մակարդակով կազմակերպված ուսուցողական այցի համար՝ երախտիքի խոսք հղելով նրանց անգնահատելի օժանդակության, ինչպես նաև Թվինինգ ծրագրի շրջանակում ՀՀ ԱՎԾ և Դանիայի վիճակագրության միջև արդյունավետ համագործակցության համար:

Հավելված 1. Ծրագիր

Ամսաթիվ Հունիսի 28 , երեքշաբթի,

Վայր Դանիայի վիճակագրություն, քաղաք Կոպենհագեն, Styrelseslokalet, հանդիպումների սենյակ, 4-րդ հարկ

Երեքշաբթի, հունիսի 28, 2016 (հանդիպումների սենյակ, 4-րդ հարկ)

10.00–10.30	Ողջույնի խոսք և ծանոթություն Դանիայի վիճակագրությանը **Շարլոտե Յուր Հանսեն**
10.30-12.00	Որակի ապահովման շրջանակ **Կարին Բլիքս**
12.00-13.00	Լանչ
13.00-14.10	Որակի ապահովման գործիք **Կարին Բլիքս**
13.00–15.30	GSBPM (Վիճակագրական բիզնես գործընթացների ընդհանրական մոդել) և GAMSO (Վիճակագրական կազմակերպությունների ընդհանրական գործառնական մոդել) **Կարին Բլիքս**

Չորեքշաբթի, հունիսի 29, 2016 (հանդիպումների սենյակ, 4-րդ հարկ)

10.00–12.00	Աշխատանք սպառողների հետ **Քարստեն Սանգենբերգ,** **Էնեգրետե Վուլֆ**
12.00-12.45	Լանչ
12.45-14.15	Տարածման ռազմավարություն և վիզուալիզացում **Սթին Դահլ Պեդերսեն,** **Լարս Քնուսեն**

Հինգշաբթի, հունիսի 30, 2016 (հանդիպումների սենյակ, 4-րդ հարկ)

10.00–12.00	Կայքէջ և Ստատբանկ **Էնեգրետե Վուլֆ,** **Դիտե Բեկսգաարդ**
12.00-13.00	Լանչ
13.00-14.20	Ստատբանկի արտադրման գործընթաց և սպառողների վերապատրաստում **Յակոբ Սոլենդեր,** **Լոունե Սլյութը**
14.20-15.30	Հատուկ վիճակագրություն, մարկեթինգ և բերնդինգ **Քլաուս Մունկ Հոունսեն**

Ուրբաթ, հուլիսի 1, 2016 (հանդիպումների սենյակ, 4-րդ հարկ)

10.00–12.00	SDMX (Վիճակագրական տվյալների և մեթատվյալների փոխանակում) և DDI (Տվյալների փաստաթղթավորման նախաձեռնություն) **Մոունս Գրոսեն**
12.00-13.00	Լանչ
13.00-14.00	GSIM (Վիճակագրական տեղեկատվության ընդհանրական մոդել) և GSPA (Վիճակագրական արտադրման համընդհանուր ճարտարապետություն) **Մոունս Գրոսեն**
14.20–15.20	Ժամանակի հաշվառում **Մարթին Բինգեն Յորգենսեն** Եզրակացություններ և գնահատում
15.20-15.30	**Շարլոտե Յուլ Հանսեն**

Հավելված 2: Հանդիպումների մասնակիցներ

Մասնակիցները ՀՀ ԱՎԾ-ից.

Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
Անահիտ Սաֆյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
Արաիկ Հայրապետյան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար
Նարինե Մուշեղյան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին,

Թվինինգ ծրագիր

Անուշ Պողոսյան, թարգմանիչ

Մասնակիցներ Դանիայի վիճակագրությունից.

Էնեգրետե Վուլֆ, հաղորդակցության բաժնի ղեկավար

Քարստեն Սանգենբերգ, հաղորդակցության և վաճառքի գծով ղեկավար

Շարլոտե Յուլ Հանսեն, ավագ խորհրդատու, միջազգային գծով խորհրդատվության բաժին

Դիտե Բեկսգաարդ, հաղորդակցության բաժնի ղեկավար

Յակոբ Սոլենդեր, հաղորդակցության գծով ավագ խորհրդական

Կարին Բլիքս, մեթոդաբանության և վերլուծության գծով գլխավոր խորհրդական

Քլաուս Մունկ Հոունսեն, գլխավոր խորհրդական, հաճախորդների կենտրոն

Լարս Քնուսեն, Տեղեկատվական տեխնոլոգիաների գծով գլխավոր խորհրդական

Լոունե Սլյութթը, բաժնի ղեկավար, հաճախորդների կենտրոն

Մարթին Բինգեն Յորգենսեն, ֆինանսական և սպասարկման բաժնի պետ

Մոունս Գրոսեն, մեթատվյալների ղեկավար